

Տարեկան գինը 10 ռուբլի կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպեկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Արեւ հասցեն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրությունը լույս է առնում անհատական 10—2 ժամ
(լույսի կիրառի և տոն օրերից)
Յայտարարությունը ընդունվում է ամեն լույսով.
Յայտարարությունները համար վճարում են
իրազեանելու լույսի 2 կոպեկ.
Տէլէֆօն № 253.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԵՐ

ԲԱՅՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԻԿԱՅ 1898 ԹԻՎԱԿԱՆԻ

ՄՇԱԿ

(26-րդ ՏԱՐԻ)

ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՆԱԿԱՆ ԼՐԱԴՐԻ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն պրոգրամայով և նոյն ուղղությամբ.
«ՄՇԱԿ» տարեկան գինը թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., մի ամսականը՝ 1 ռուբլի:
«ՄՇԱԿ» գրվել կարելի է ԽՊՏԱԿԱՆՆԵՐ (Բաղադրայա և Բարձրագույն փողոցների մոտ) կայսրության ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է գրվել հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ ТИФЛИС, Rédaction du journal arménien «MSCHAK».
Յայտարարություններ ընդունվում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով. բառեր վճարվում է 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Օրէնք է թէ բացառութիւն. Թիֆլիսի բաժանա-
րատան անկողն ծրարները.— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ.
Օրէնք. Հերոսն ինքնապէս գէտ. Գաղթականների
օգտին. Հայոց ներկայացումները Բաղուս. Նա-
մակ էջմիածնից. Նամակ Մոսկովայից. Ներքին
ուրբեր.— ԱՐՏԱԿԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ. Վերջին տեղե-
կություններ. Գլխավորի ծննդական տարեգրքը.
Արտաքին լուրեր.— ԽԱՆԻ ԼՈՐԵՐ.— ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ԹԻՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.

ՕՐԵՆՔ Է ԹԵ՛ ԲԱՅԱՌՈՒԹՅՈՒՆ

Հայոց հոգեւոր բարձր իշխանութեան
կողմից վերջին օրերս թողնուած ա-
մուսնալուծութեան մի քանի դէպ-
քերը, որոնք զրեթէ անօրինակ են հանգի-
սանութեան եկեղեցու կանոնական պրակտիկայի
մէջ, ստիպում են դարձեալ մի քանի խօսք
ասել այդ առիթով. Այդ դէպքերը, իբրեւ
նոր, ինչպէս և պէտք էր սպասել, ընդ-
հանուր հետաքրքրութիւն են յարուցել,
որովհետեւ հոգեւոր իշխանութիւնը, լուծե-
լով մի քանի ամուսնութիւններ, թողնա-
րել է երկու ամուսնիներին ևս
կրկին պատկեր, իսկ այդ դէպքը, ինչ-
պէս ասացինք, շատ հազուադէպ և զուգէ
անօրինակ է Հայոց եկեղեցու կանոնական
իրաւաբանութեան մէջ:

Յայտնի է, որ եկեղեցական օրէնքը լու-
ծում է ամուսնութիւնը միայն ամուսնի-

ներից մէկի յայտնի անհատաւորութեան
դէպքերում և երբեք չէ թողնուած ան-
հատաւորութեան ծանաչմամբ կողմի կրկին ա-
մուսնանալ: Հնադարեան ողով ներշնչմամբ
այդ օրէնքը, որ մինչև այժմ իր գորու-
թեան մէջն է և չէ ջնջված, բնականա-
բար, այժմեան դարում, երբ մարդկութեան
բարոյական աշխարհայեացքը անկել լայ-
նացել և զարգացել է, երբ սօցիալական
պայմանները արմատականապէս յեղաշրջվել
են, յարուցանում է ընդհանուր արտուճ-
եալ սակայն, եկեղեցին մինչև այսօր խուլ է
հանդիսացել դէպի այդ արտուճները, չէ
կամեցել զիջել ժամանակի արդար պա-
հանջներին: «Մշակ» շատ անգամ է ար-
տայայտել այդ պահանջները: Մամուլի կար-
ծիքը, որը այդ դէպքում հանդիսացել է
ժողովրդի բողոքների, բարոյական տան-
ջանքների արտայայտիչ, միշտ անտես է
առնել և հասարակութիւնը, չէր ստանա-
լով զոհանքում օրինական ծանապարհով,
գիմել է ապօրինի միջոցների՝ պատկի
այն ձեւերին, որ եկեղեցին չէ ընդունում:
Երկու էակեր, որոնք զգալաւորութիւն են
ունենում սխալմամբ կամ թիրախաւոր-
ութեամբ կապել միմեանց հետ լրանց կեան-
քը, բախտը և ապագան, առանց փոխա-
գործ համակրութեան, առանց սիրոյ և
համբարշտութեան, որ ամեն մի ամուս-
նական կեանքի միակ հիմնաքարն է,
ստիպված են կամ ապրել միմեան՝ մինչև
իրանց մահը առեւով և արհամարհելով

լով: Թիֆլիսից այդ կողմերը գալուց յե-
տոյ, այդ բոլոր ծանօթներն ու փշոտ անտառնե-
րը հետզհետէ անհետանում են. անայտնի ու
ապականակ ծանօթների տեղ՝ այսօր սիրուն
արտեր են բացվել. գալորել ու գաղաւթների տեղ՝
չենարար, բանող մարդիկ են՝ ապրում. յետ ըն-
կած ու մուսնացած անկիւնները թուփումն ար-
դիւնաբերական կենտրոններ են դարձել:

Համարձակ կարելի է ասել, թէ որ օրից
որ հայը իր ոտը դրել է Սե ծովի ափե-
րը, այն օրից է սկսվում այդ երկրի և մաս-
նաւորապէս՝ Սոխումի շրջանի առաջ գնալը:
Մի կողմից յարմար վարկահոգի պակասութեան
պատճառով՝ հայերը ամեն տեղ կովկասեան ա-
փերում ստիպված են լինում հոկայական կու-
միւն ծանօթներն ու անկողն անտառների և ան-
մշակ ու քարքարոտ տեղերի դէմ, որով և քիչ
չեն նորաստում երկրի առողջական վիճակի բա-
րելւոյն, հետզհետէ բանալով ու մարքելով քա-
միւնների հոտանքի առաջ ջրով ու օդի ապակա-
նութեան բնքեր. միւս կողմից թուփումն մշա-
կութեան պատճառով՝ անաղին դարկ են տալիս
այդ երկրի անտեսական դարգացման: Եւ ինչքան
աշխատանք ու տանջանք է թափել հայը, ինչ-
քան խելք ու միտք մաշել, այդ անտառներն ու
քարքարոտները մարքելու վրա, մինչև որ կարո-

միմեանց և ուրեմն դժուր դարձնելով ի-
րանց ընտանեկան կեանքը, կամ դիմել ան-
բարոյականութեան և անձնասպանութեան,
իրեւ ազատութեան միակ հնարաւոր մի-
ջոցի:

Հայոց հոգեւոր իշխանութեան վերջին
կարգադրութիւնը—լուծել ամուսնութիւ-
նը, թող տալով երկու ամուսնիներին էլ
նորից պատկեր, ընդհանուր արգաւորութեան
և բարոյականութեան տեսակէտից կարելի
է միայն համակրութեամբ ողջունել, միայն
մի պայմանով, եթէ նա կաշկանդված չի
լինի այնպիսի պայմաններով, որոնց դու-
րադրութիւնը միանգամայն ցանկալի չէ:

Անփոփոխ և իր նախկին գորութեան մէջ
թողնելով եկեղեցական այն օրէնքը, որ
թող չէ տալիս լուծել ամուսնութիւնը՝ եր-
կու ամուսնիներին ևս հաւասար իրաւունք
չնորհելով, Հայոց հոգեւոր իշխանութիւնը
չեղբւում է այդ օրէնքից, բացառութիւն
անկողն մի քանի անհատներին համար:
Ուրեմն դուրս է գալիս, որ դա օրէնք չէ,
եղած հին օրէնքի բարեփոխութիւն չէ,
այլ մի բացառութիւն, որ անվում է մի
կամ միւս գործը, ազգային մարդու համար,
բայց չի անվի ուրիշների համար, ընդ-
հանուր կանոն և օրէնք չէ հաստատուում,
այլ միայն բացառութիւն է անվում: Այսօր
կարող է այդ բացառութիւնը անվել ար-
դար ցանկութեամբ, վաղը նա կարող է լայն
զուռ բառ անել կառաքել համար, միջոց
տալ՝ ամուսնալուծութիւնը փողով ծա-
խելու: Այն, նախ փոխեցէր այնպիսի և ան-
պէտք դարձած օրէնքը, առհասարակ չէր
օրէնք, յարմարված ժամանակի և արդա-
րութեան պահանջներին, դարձրէր նրան
ընդհանուր և գործադրելի ընդհանուր-
ութեան համար և այն ժամանակ, այդ նոր
եկեղեցական օրէնքների համաձայն արտա-
սանված վճիռները կընդունվեն համակ-
րութեամբ և ողևորութեամբ ամբողջ հօ-
տի կողմից:

Նախ օրէնք և ապա գործադրութիւն,
առանց բացառութեան այս կամ այն ան-
հատի համար:

ԹԻՎԱԿԱՆ ԲԱԺԱՆ-ԲԱԺԱՆ ԱՆԵԼՈՒ ԾՐԱԳԻՐԸ

Նորերս լծողում Լայ տեսաւ մի հետաքր-
քիլ բրօշուր որը պարունակում է թիւրքա-
կայսրութիւնը բաժանաբաժան անկողն նախադի-
քը յոգուտ եւրօպական լաղաղութեան և ճիւղ-
ված թիւրքահայտաւանների բարօրութեան հա-

մար: Բրօշուրի հեղինակն է անգլո-հնդկաստան-
ցի մի պարոն որը բաղաձայնաբար փորձառութիւն
ունի վարչական գործերում: Հեղինակի կարծի-
քով այժմ արդէն ժամանակը հասել է թիւրքի
եւրօպական եօթ պետութիւնների մէջ բաժան-
բաժան անկողն համար: Միայն այդ կերպ, ա-
սում է նա, կարելի է կազմել Օսմանեան կայս-
րութեան 42 միլիոն ազգաբնակչութեան երջան-
կութիւնը, որովհետեւ անհնար է թիւրքի
ապրող իւրաքանչիւր ժողովրդին անկախ ազգ
դարձնել:

«Թէպէտ ամենքը անկասկած համաձայն են
այն բանի հետ, շարունակում է հեղինակը, որ
պէտք է մի որ և է արմատական միջոց ձեռ-
առնել թիւրքի ներկայ անաւանի գոյութիւնը
փոխելու համար, սակայն առաջարկված միջոցի
վերաբերեալ կարծիքները տարբերվում են: Մի
քանիսները այն կարծիքն են յայտնում, թէ
պէտք է վերջնականապէս բաժանաբաժան անել
կայսրութիւնը, միւսները կարծուրդ են տալիս
հինիս եւրօպական մի կամիւտ՝ արմատական
բարեփոխումների սխեմա կազմակերպելու
համար: Բայց վերջին միջոցը անպատճառ ան-
գործական և անիրագործելի կը համարվի և
վերջ ի վերջոյ, այնու ամենայնիս, ստիպված կը
լինին բաժանաբաժան անկողն սխեման ընդունել
և որքան չուտ, այդքան լաւ: Ընտանեկան կայս-
րութիւնը և հին Յունաստանը համարեալ այդ
կերպ անհետացան: Վրանք յետ մնացին իրանց
ժամանակից և ցնդվեցին աշխարհի երեսից: Եւ
խօսակցում էի թիւրքաց փաշաների, եւրօպական
հիւպատոսների, վաճառականների և միսթոնի-
ների հետ այդ մի և նոյն առարկայի մասին—
«թիւրքաց կայսրութեան ապագայի մասին» և ե-
կայ այն համոզման, որ եւրօպական կառավա-
րիչներից ամենախիստը և ամենաանհամակրելին
այնու ամենայնիս անկողն է անխկան տիրա-
պետողներից ամենախաբէրը»:

Վերջապէս հեղինակը ծանօթացնում է թիւր-
քաց կայսրութիւնը բաժանաբաժան անկողն իր
նախադիւ հետ: Նա թիւրքաց կայսրութիւնը
բաժանում է եօթ եւրօպական պետութիւնների
մէջ, այն է Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիա-
յի, Ռուսաստանի, Աւստրիայի, Իտալիայի և Յու-
նաստանի մէջ:

Յունաստանը, հեղինակի կարծիքով, պէտք է
ստանայ կրեւել կղզին և Ալբանիա: Եւրօ-
պական բոլոր կղզիները: Տրիպոլիսը կը արվի Ի-
տալիային: Մեծ Բրիտանիան, ի հարկէ, կը ստա-
նայ Եգիպտոսը և Կիպրոսը: Ֆրանսիան կը ստա-
նայ Սիրիան և Մէսոպոտամիան: Գերմանիան կը
ստանայ Արարիայի թիւրքաց նահանգները: Ինչ
վերաբերում է Աւստրիային, նրան պէտք է արը-
վի ամբողջ եւրօպական թիւրքիան, բացի Ալա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԹԻՎԱԿԱՆ ԶԱՅԸ

(Տպագրութիւնն է)

Ցանկութեամբ տարուց աւելի է, ինչ Սե ծովի ա-
նտառիկական անկողնից սկսել է գաղթել թիւրքա-
նայր դէպի Սոխումի շրջանը: Սոխումից և
նրա մոտակայ տեղերից, Կոքորից ու Մէլէքլայից
սկսած մինչև Գուգուտ, ծովափի երկայնու-
թիւնով յերոցան փոխված են հայ գաղթական-
ների խմբերն ու զիւղերը: Ամբողջ շրջանում
նրանց թիւը այսօր ութ հարիւր տան չափ կը
լինի: Ուր մտնելու կանցելի, թէ Կովկասեան այս
անկողն ու ամառի անկողն, դարերի ընթացքում
արիւնքների ձեռքի տակ անօգուտ ու անտնայ
մնալուց յետոյ, այսպիսի խաղաղ ու աշխատա-
ւոր մարդկանց ձեռքը կանցնեն: Գիւտ ևս մի
քանի տարի անցնելուց առաջ, այդ անկողն թանձ-
րախտ ու ծանօտ անտառներով էին ծածկված,
ջրով ու ապականութեան բուռն էին, խուլ ու
յետ ընկած տեղեր, որ գիւղեր-գիւղերի միայն գա-
լերի ու «գիւղիների» (չախկալ) ձայնը էին

նրանց ամեն մի դեսնաւորին վրա ամենաքիչը
մի 150 ռուբլի փող կը գնար, իսկ տեղ-տեղ
նոյն իսկ 200 ռուբլի նայելով տեղի դժուարու-
թեան ու աշխատանքին: Ամբողջ շրջանում մի-
միայն հայ գաղթականների ձեռքով աղբյուր
բացված ու մաքրված տեղ գուցէ թէ չորս հա-
րիւր դեսնաւորինց ասելի կը լինի, հէնց թիւրք
չորս հարիւր դեսնաւորին ընդունելը, քիչ քան է
գա: Ամենաքիչը յետոյ—վաթսու հազար ռուբ-
լի փող կանէ միայն աղքատ տեղ մաքրելը: Տեղ
կայ մեր շրջանում, ուր կառուածատէրը հէնց
միայն այն պայմանով էլ տալիս է հողը հայ
գաղթականներին, որ արանք պարտաւորվեն
տարուց տարի տան գլուխ ամենաքիչը մի-մի
դեսնաւորին տեղ մաքրել նրա անտառներից ու
քարքարոտներից: Նրանք էլ անում են, ոչ միայն
անում են, այլ և մեծ աշխատանքով ու ծախսով
բացված արտի համար էլ պարտաւորվում են
կապաւորված տալ: Շատ-շատ միայն առաջին
տարվան համար է զիջում լինում. այնուհետեւ
վճարը տրվում է, ինչպէս և միւս բաց վարկա-
նորքի համար:

Ցանկութեւլ աշխատանք, մեծամեծ ծախսեր—և
նա համար: Գոնէ այն միւլթարութիւնն ունե-
նար գիւղացին որ դրանք իրանն են մնալու,
կամ երկար տարով իր ձեռքից խելու չեն.

Յ. Մուրադեանց

ԾԵՔԵԼԴԱ
(ՍՈՒՍՈՒՄԻ ՇՔՆԱՆԻ)

Ըստ երևոյթին հանդարտ սահման է Մարդարիտի կեանքը. իսկ ինչ կայ թաղցրած նրա կուրծքի խորքերում. կան անդեռ խեղդված, ճնշված ըզ-գացմունքներ թէ՛ ոչ, թէ՛ կային և կամայ-կամայ բնական կամ անհետացան, թէ՛ գոցե՛ նա՛ իր կրթութեամբ և բնաւորութեամբ՝ ստոր, մանր հայիւհներից դուրս ոչինչ ոչ կարողանում է տեսնել, ոչ էլ զգալ։ Մակայն մինչը գիտենք, որ բոլոր Մարդարիտները միատեսակ չեն. նը-րանց մէջ լինում են այնպիսիներ, որոնք բա-րայական հայտնութիւն երբեք չեն կարող զգալ չըջապատող աստմոֆերայի հետ։ Այդ տեսակնե-րի համար բաւական է մի փոքր ի շատէ խոշոր, սթախեցողիչ զէպը, որպէս զի նրանց հոգին նո-րից յուզվի, թերեւ անսպասելի և իրանց հա-մար։ Մարդարիտը ըստ երևոյթին անվրդով թերեւ ուրախ, այցելում է ժողովարանը, ընտե-րացել է սովորական կեանքին, այն կեանքին, որ մինչը զարշնկի պրօպ անուանեցինք։ Եւ յան-կարծ նոյն ժողովարանում նա հանդիպում է իր մանկութեան ընկերոջը.— իր նախկին տէրը, մի մարդու, որը այլ աշխարհից է, այլ ձգտումների տէր է։ Մարդարիտի հոգին արդէն խռովված է, նրա հակումների և իրական կեանքի մէջ եղած կոնտրաստը բացվում է վարճուրդեցող մեղրու-թեամբ։ Գրամատիկական վարկերանը բնական և կենսական է։ Եւ ինչ նուրբ դիտողութիւն։ Հեղինակը մնալով բնական, առանց շինծու և րդոյթների դիմելու, բաց է անում լուսաւոր պծեր այնպիսի չըջանում, ուր ըստ երևոյթին ա-մեն բան խեղդված է մանր հայիւհների և ան-սիրտ ձեւակերպութեան մէջ։ Չը նայելով հերոսի (Արտաշէսի) բնաւորութեան սատակ իղէա-լացման, մի բան, որին դրաման հանդուցիչ հա-մար առանձին կարիքը չունի, վայրկեանը շատ բնական է. խորթ, մտացածին ոչինչ չը կայ։

Բայց Ստեղծեկանցի երկի արժանաւորութիւնը ինչով սկսվում է, նրանով էլ վերջանում է. կար-ծեք թէ միայն առաջին գործողութեան մէջն է գործել «Պէլօսի» հեղինակի տաղանդը, և այնու-հետեւ մի որոշ մարդ լինի շարունակած նրան։ Անդժիքը սկսվում է հէջ նրանից, որ հեղինակը ուղեցել է անպատճառ լուծել դրամատիկական հանգույցը, բաժանվելով այդ զէպերում իրական կեանքից, լուծել որոշ բնցեպտով։ Մարդարիտի յուզումը շատ բնական է, բայց կեանքում, պա-տանում է, փոքր ի շատէ չափաւ, որ այդ տե-սակ յուզումները մաքարման կամ յարաբերու-թիւնների խցման են հասցնում, թէ՛ յուզմունքը թաղվում է կուրծքի խորքերում և խեղդվում արտասուքների մէջ։ Բացառութիւնների վրա չէ կարելի դրամա հիմնել. նա կեղծ կը հնչի, որով-հետեւ նրա և հասարակական մարմնի շղերի մէջ կապ չը կայ։ Ամբողջ կէս դարի ընթացքում երկու երեք անգամ պատահած զէպերի վրա չէ կարելի գրականական երկ հիմնել։ Հեղինակը թերեւ իրականում նկատի.— «Բայց ինչ անել, ինչ պէս ստեղծել դրամա, որը պահանջում է մաքա-ռում, կռիւ, լուծում, իրական կեանքի երևոյթ-ների սահմանում մնալով՝ կը մնայ միայն էլե-գիաներ գրել, խորտակված զգացմունքներ, և կուրորական (passive) ստանդարտներ նկարագրել՝ գոնէ այն չըջանի վերաբերումով, որից վերջ-րած է պիէսի նիւթը»։ Այս այն կէսն է, որտեղ սայթաքվում են հայ հեղինակները, ջանալով կրքին և յուզմունքին տալ շինծու և ոչ բնաւ-կան (մեր կեանքի տեսակետից) արտայայտու-թիւն, երկի մէջ զորեղ դրամատիկ մոցնելու և ցանկալի, թէ՛ անբնական տիպեր տալու համար։ Գուրս դալով ուղիղ ճանապարհից, պ. Ստե-ղծեկանի տաղանդը, կամ ասելի ճիշդ, խեղճ կեղծում է և մանրամասնութիւնների մէջ, լցնելով երկը բնականութիւնների և կրկնութիւններիով։ Հետաքրքիրն այն է, որ պ. Ստեղծեկան մի կող-մից այս գրութեամբ ըստ երևոյթին հանդիսանում է իրեն բողոքող սովորական կեանքի կաշկան-դիչ պայմանների դէմ, յատկապէս ամուսնական, միւս կողմից, եթէ այսպէս կարելի է ասել, նա ուզում է «տուրք հատուցանել» և իր պահ-պանողականութեան, ապահարդան բառը աղա-տութիւն (!?) թարգմանելով...

Պիէսի խաղը գոհացուցիչ էր։

Ս.

ՆԱՄԱԿ ԷՃՄԻԱՆԻՅ

Գեկտեմբերի 24-ին

Վեհափառ Կաթողիկոսը այսօր առաւօտեան, ժամը 12-ին, ուղևորվեց դէպի Թիֆլիս. մայր տաճարում մաղթանք կատարելուց յետոյ, Վե-հափառը իր հրաժեշտի ողջոյնը տուեց միաբա-նութեան և հեռաւոր Էջմիածնից։ Ամբողջ միա-բանութիւնը, ձեւարանի աշակերտների և ժողո-վրդի բազմութեան հետ, դուրս եկաւ մինչև դիւ-ղի հրապարակը Վեհափառին ձանապարհ ցցելու,

իսկ մինչև երեան ուղեկցելու դնային՝ Ստեփա-նաբեկիակոսը, Գարեգին վարդապետ Սաթու-նեան և Կարապետ վարդապետը։ Երեանից Կա-թողիկոսը դուրս կը գալ դէպի Թիֆլիս շաբաթ օր, դեկտեմբերի 27-ին։ Վեհափառի այս ձմեռ-ժամանակ Թիֆլիս գալու նպատակը յայտնի չէ։

Մատթէոս վարդապետ Մատթէոսեան նշանակ-ված է Նոր-Բայազէտի գործակալ։

Ա. Օնանջանեանց

ՆԱՄԱԿ ՄՕՍԿՎԱՅԻՑ

Գեկտեմբերի 18-ին

Գեկտեմբերի 14-ին, աշնունականների ժողովա-րանում կայացաւ ուսանողների հայկական երկու-թը, որ չափից դուրս աջող կարելի է համարել։ Ժողովարանի դաշխններից երկուսը զարդարված էին գեղարուեստորէն, ասիական ճաշակով Գահ-լիճի մէջ՝ վրանների ձևով շինած էին չորս անակ-զարդարված ասիական կահկարասիքով և երաժշ-տական գործիքներով։ Մէկի մէջ, բարձրութեան վրա, նուազում էր սաղանդարը, միւսի մէջ վա-ճառվում էին արծաթեայ իրեր՝ Ախալցխայի չէնք, իսկ երրորդ և չորրորդ անակները մէջ հանդուստանում էր ժողովուրդը։ Տնակներից մէկի կատարի վրա տեղաւորված դուրնան նուազում էր լեզգինկա, կլնատուրի և եակլի, իսկ ներքեում ոգևորված հասարակութիւնից կազմված չըջանի մէջ պարում էին։ Սենսակի մի պատը ներկա-յացնում էր Անիի ընդհանուր տեսարանը, աջ, ձախ աւերակներ, լուսնի ամպերի միջից լուսաւո-րում էր Ախուրեան գետը։ Տեսարանը սքանչելի էր։ Գահլիճի մէջանդ դրված էին բոյսեր, և ահա այդ բոյսերը, անակները, առատաղը, պա-տերը, մի խօսքով ամբողջ դաշխնը իր գոյնըգոյն էլեկտրական լուսով դիւթական աղբեցութիւն էր թողնում մարդու վրա։

Այնքանքը երաժշտական մասին։ Ահա բնմի վրա երեսց երգեցիկ խումբ հայկական տարադով և այնպիսի հմտութեամբ երգեց օրիկսորի հետ միասին Շուշանիկի երգը, որ մայր անկարող էր չը դմայվել. խումբը և օրիկսորը կառավա-րում էր խօլիտով-խմանով. ծափահարութիւննե-րին վերջ չը կար։ Խմբից յետոյ օրիկսորը նուա-գեց նոյն ասիական—հայկական եղանակներ, յե-տոյ երգեցին երգչուհիները դարձեալ հայերէն։ Ա-ռաջին մասը վերջացաւ կենդանի պատկերով՝ «Աշուղ»։ Աշուղի չուրջը հաւաքված հարսներ, աղջիկք, ծերեր, երիտասարդներ խորին ուշադրու-թեամբ բարել էին իրանց լսողութիւնը՝ բնու-թողովրդական աշուղի սրտաբորբոք երգը։ Երկ-րորդ մասը նոյնպէս սկսվեց խմբական երգով, ապա երգեցողութիւն, նուազ և նորից կենդանի պատկեր։ Այս անգամ աղբիւրի մօտ հաւաքված էին գիւղի աղջիկները, յանկարծ սարի ետեից յար-ձակվում է նրանց վրա դրահաւորված երիտասա-րը՝ իր ընկերոջ հետ և փախցնում է իր սերածին և թէ՛ առաջին և թէ՛ երկրորդ կենդանի պատկերը ժողովուրդը կրկնել տուեց մի քանի անգամ ժամը 12-ին հաղիւ վերջացաւ երաժշտական մասը։ Վարագոյրը ընկաւ, նորից բացվեց և բե-մի վրա երեսց դուրնան կլնտի հետ միասին, սկսվեց կլնտուրի, դրան յաջորդեց լեզգինկա։ Հանդիսականները մեծ հետաքրքրութեամբ նայում էին այդ պարերին և նորից ու նորից կրկնել տա-լիս։ Պարերը շարունակեցին մինչև ժամը 3-ը։ Ուսանողութիւնը բոլոր մասնակցողներին ընծա-ներ տուեց։ Զուտ արդիւնք մնաց 2000 բուրլի, որ մի փոքր նեցուկ կը լինի կարօտ ուսանողնե-րի համար։ Զարմանալի է, թէ ինչու Մոսկվայի հարուստ հայերը իրանց պարքն էին համարել չը գալ երևոյթին։

Օր. Կ. Մուրադեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Այսօր հրատարակում ենք «Մշակի» 1897 թւի վեբլին համարը։ 1898 թւի առաջին համարը լայն կը տեսնի հնդկաբլթի, յունկալի 1-ին, և կուղարկվի միայն նոր բաժանորդներին։

Նրէկ գիշեր, Ռոսայ գործակալութեան միջո-ցով Պետերբուրգից ստացանք հետեւալ հեռա-գիրը։ «Գեկտեմբերի 29-ին վախճանվեց ժողո-վրդական լուսաւորութեան միջոցաւ կոմս Գե-կանովը։ Գիւլիանով աղբում հայ է. ծնվեց 1818 թւին, մինիստր դարձաւ 1882 թւին։

Այսօր, գեկտեմբերի 30-ին, Թիֆլիս կը հասնի ամենաշն շայոց Կաթողիկոսը։ Նրէկ գիշեր Գիւլ-ջանից ստացանք հետեւալ հեռագիրը. «Վեհափառը երեքշաբթի երկուցեան կը հասնի Թիֆլիս»։

Ամերիկայի Ուսթըր քաղաքի մէջ հրատարակ-ված մի լրագրի մէջ կարդում ենք հետեւալ լուրերը. «Այս տարի Փրօվիտէնի գեշերվայ

դպրոցները 200-ի մօտ հայեր կը յաճախեն։ Ուս-թիւրի հայ աշակերտաց թիւը 50-ի չը հասնի, ուսուցիտ կը նուազի։ Երբեք մէջ ուսանողա-կան ակումբ մը հաստատված է անդ զանոյղ հայ ուսանողաց նախաձեռնութեամբ։ Ի մօտոյ Պոսթօնի մէջ հայ և ամերիկացիներէ խառն բա-րեգործական ընկերութիւն մը պիտի կազմվի հայ որբերի հոգալու նպատակաւ։ Լօրենսի մէջ աղգային ժողովարանին մէջ կատարվեցաւ ի յիշատակ դէյթունցի քաջերուն տարեդարձի հան-դէս. մօտ 250 անձանց բազմութիւն մը խնամ էր սրահն»։

Գեկտեմբերի 21-ին, Պետերբուրգի համալսարա-նում, գէօլոգիական կարնէտի հսկող Ն. Կարակաչ, աղգով հայ հրապարակով պաշտպանեց իր դե-սերտացիան, որ ներկայացրել էր՝ հանքաբանու-թեան և երկրաբանութեան մագիստրատի աստիճա-նը ստանալու համար։ Գիտերտացիայի վերնա-գիւրն էր. «Կոլկասեան գլխաւոր լեռնաշղթայի հիւսիսային լանջի կաճային շերտերը և նրանց ֆաունան»։ Մագիստրանտի curriculum vitae-ից երևում է, որ պ. Կարակաչ մտել է Պետերբուր-գի համալսարանը 1883-ին և ուսման ընթացքը Ֆիլիկո-մաթէմատիկական ֆակուլտետում աւար-տեւեց յետոյ, նրան պահել են համալսարանում, որպէս զի պատրաստվի գէօլոգիայի պրօֆէսորի ամբօնը ստանձնելու համար։ 1889 թ. նա նը-շանակվեց համալսարանի գէօլոգիական կարնէ-տի հակալ. 1888—91 թ. ընթացքում կատարեց մի քանի գէօլոգիական հետազոտութիւններ Կրե-մաւ և Կովկասում, մինիստրութեան յանձնա-բարութեամբ, իսկ 1894 թ. նա ուղարկվեց ար-տասանման Յիւրիլում գումարված VI միջադ-գային գէօլոգիական կոնգրէսին մասնակցելու։ Մագիստրանտը արդէն մի քանի ուսումնական աշխատութիւններ ունի։ Պաշտօնական օպյո-նիստներ նշանակված էին պրօֆէսոր Խոստրաւ-ցէվ և պրիւստ-դօցէնա Սօկօլով։ Ընդդիմախօսու-թիւններից յետոյ, ինչպէս հաղորդում են Պե-տերբուրգի լրագիրները, Ֆիլիկո-մաթէմատիկա-կան ֆակուլտետի գէլան պրօֆէսոր Սոլէտօւ, բազմաթիւ ունիւդիւնների բուռն ծախահարու-թիւններով յայտարարեց, որ Ն. Կարակաչ ար-ժանանում է մագիստրոսի աստիճանին։

«Новое Время» լրագրի Բագուի թղթակիցը հաղորդելով այն լուրը, թէ յայտնի թիւրք դրա-մատը Հալի Ձէյնալ Թաղիւի նշանակվել է պատուաւոր հայտարար գաւառու, հետեւալ դա-տողութիւնն է անում. «Մինչ այժմ մենք գի-տէինք, որ պատուաւոր հայտարար դատաւորի պաշտօնի համար ընտրվում էին իրանց գիւղալ աշխի ընկնող, իրանց հասարակական գործու-նէութեամբ յայտնի և հայրենիքին օգուտ բերող անձինք, բայց մինչև այժմ մենք մտածում ենք և չենք կարողանում բւթնել, թէ ինչ տեսակ ծառայութիւնների համար է Թաղիւի այդ պատ-ւին արժանացել, եթէ ոչ նրա համար, որ նա միլիտանտ է Թաղիւի լուրորդին անդրադէտ է. նա չը դիմէ ոչ կարգաւ, ոչ գրել, ոչ խօսել ուսանելին. նա անդրադէտ է նոյն իսկ թիւրքաց լեզուի մէջ, իսկ այդպիսի պայմաններում նրան հայտարար դատաւոր նշանակելը ուղղակի հա-կատակ է օրէնքին։ Խնչ դրութեան մէջ կրկնի ամեն մի մեղադրված, եթէ նրան դատի այդպի-սի մի հայտարար դատաւոր կամ գոցել պ. Թա-ղիւի միտք ունի դատել շարիաթի օրէնքով»։ Այդ ճշմարտութիւնը թէ՛ տարրորինակ է հրնչ-վում «Новое Время» լրագրի էջերում և նրա թղթակցի բերանից, բայց և այնպէս ճշմարտու-թիւն է...

Փոքր-Ասիայի և Թիւրքիայի տնտեսական պայ-մանները և դրութեան մասին նորերս ստացու-վեց մի աշխատութիւն, որի հեղինակն է աստ-րիացի, արդիւնադրծական միութեան քարտու-ղար Գրոնցելը։ Հեղինակը տեղնուտեղը ու-սումնասիրել է երկիրը, մարդկանց և տնտեսա-կան յարաբերութիւնները, և նրա աշխատութիւ-նը լուրջ հետազոտութիւններից մէկն է Արեւել-քի մասին Բայի դրանից, դօկտոր Միլլէր-Սիմօ-նիս հրատարակել է մի գիրք, Փոքր-Ասիայի վե-րաբերեալ որի մէջ տալիս է հետաքրքիր տեղե-կութիւններ այդ երկրի մասին, որ վերջին ժա-մանակներս դարձրել էր իր վրա Նիւօպոլի ու-շադրութիւնը։ Գրքը կրում է «Durch Armenien, Kurdistan und Mesopotamien» («Հայաստանի, Բիւրդիստանի և Միջագետքի վրայով») վերնա-գիրը։

Ուրբաթ, գեկտեմբերի 26-ին, Թիֆլիսի ժողո-վարանում տեղի ունեցաւ երգիչ Ն. Շահլամեա-նի կոնցերտը, մասնակցութեամբ Յիւմ քարերի։ Կոնցերտի պրօգրամը կազմված էր աջող և բաղ-

մակողմանի. մի քանի պիէսներ նորութիւն էին մեղ համար։ Կոնցերտի սկզբում պ. Շահլամեանի ձայնը փոքր ինչ թոյլ էր, իսկ յետո նա հանգեւ եկաւ իր ամբողջ ոյժով և ընդարձակութեամբ։ Աջող էին Իսպաօլիտօւ-իվանօվի էլլատական բալլադան, «Պօէտ» օպերայից Արիօօ Լուիլին, խաղական երաժիշտ Տօտիւր L'ultimo bario բօ-մանսը, «Паяцы» օպերայից վերցրած «Смѣхъ паяцъ» կտորը։ Հայերէն երգած «Կուռնի», «Չայն տուր ով ծովակ», «Հաղար երանի» եր-գերը արժանացան բուռն ծախահարութիւնների։ Մրագրի մէջ կար և մի վրացերէն երգ՝ «Նանա-չվիլօ» անունով, հեղինակութիւն Բալանչիվաձէի։ Եւգենիա Յիւմ աջող նուագում է դաշնամուրի վրա։ Գահլիճում բաւական բազմութիւն կար։

Կիրակի, գեկտեմբերի 28-ին, ժողովարանում տեղի ունեցաւ Հայուհեաց Բարեգործական ըն-կերութեան պարահանդէսը, որ անցաւ շատ կենդանի կերպով։ Պարերը տեղեյն մինչև 4 1/2 ժամ։ Այցերդիւնների բազմութեանը նայելով, երե-կոյթի արդիւնքը պէտք է բաւական մեծ լինի։

Գեկտեմբերի 14-ին Թիֆլիսի ժողովարանում Կովկասի հայոց Բարեգործական ընկերութեան օգտին կայացած պարահանդէս—բաղարի մասին մենք յայտնել էինք, որ զուտ արդիւնք կը մնայ 1500 ռ.։ Այժմ մեղ հաղորդում են, որ զուտ արդիւնք մնացել է 2000 ռուբլոյց աւելի։

Ինչպէս հաղորդում են Պետերբուրգի լրագրի-ները, տիկին Պէշկօւ-Տօլիլէրօվային թոյլատըր-ված է հրատարակել առաջիկայ տարւայ մարտ ամսից, իր խմբագրութեամբ, մի նոր ամսագիր «Вѣстникъ Дѣла», որ բացառապէս նուիրված կը լինի կանանց հարցին։ Իր դամաճական ճա-ռերից մէկում Վիկտօր-Հիւգօ ասաց, որ XX դարը պէտք է պատկանի կանանց, ինչպէս XIX դարը պատկանում է տղամարդկանց։ Տեսնեք, որքան կիրաւորվի այդ գուշակութիւնը, իսկ կանանց հարցին նուիրվող նոր օրգանին կատա-րեալ աջողութիւն ենք ցանկանում։

Մեր թղթակիցը երևանից գրում է գեկտեմբերի 26-ից. «Վեհափառ Կաթողիկոսը 2 օր է այստեղ է և վաղը ձառնապարհ է ընկնում դէպի Թիֆլիս։ Նրա հետ են Կորիւն և Մուրադեան վարդապետները»։

Շուշուց, պ. Խաճակ Թաղէտեանց նուիրեց «Մշակի» 1898 թւի երկու օրինակ, մէկը Շուշու Բարեգործական ընկերութեան, միւսը թողնելով մեր խմբագրութեան տրամադրութեան տակ։ Մենք «Մշակի» այդ օրինակը որոշեցինք ուղար-կել Գանձակի հայ գլխւորներին։

Բագուից, պ. Առաքել Մատուրեան նուիրել է «Մշակի» 1898 թւի մի օրինակ, որը մենք որո-շեցինք ուղարկել Գօրու հայ գլխւորներին։

ՆԵՐՔԻԱՆՑ մեղ գրում են. «Թեմական դպրո-ցից արձակեցին կրկին մի ուսուցիչ՝ Վ. Տէր-Խա-չատրեանին։ Հողաբարձներից մէկը՝ Տ. Տէր-Յա-կոբեան, որ բժ. Յովհաննիսեանի և Կ. Կամա-րականի հետ հրաժարվել էր և նորից պաշտօնը շարունակում էր, վերջնական կերպով հրաժար-վեց՝ համաձայն չը լինելով հողաբարձութեան վերջին մի քանի անարդար վարմունքներին»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՁԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«Freie Osm. Post» լրագիրը հաղորդում է, որ թիւրքաց կառավարութեան դրդմամբ հայոց պատրիարքը խմբագրել է մի հովանաւոր չըջա-րեական, որ պէտք է կարգադրել բոլոր եկեղե-ցիներում, բայց վերջին բուզին, Նլդդի պալա-տից հակառակ հրաման ստացվեց։

Գեկտեմբերի 23-ին, հայոց պատրիարքը ներ-կայացրեց սուլթանին մի ուղերձ, որ բաղկացած էր 18 կէտերից։ Նա խնդրում է ամենալայն օգ-նութիւն հասցնել գաւառներում տիրող աղքա-տութեան, բողոքում է այն խիստ միջոցների դէմ, որ ձեռք է առնում ոտովեանութիւնը, հա-լածելով անխաղ բոլոր հայերին, պահանջում է գործադրել մինչև այժմ արված իրադէսերը հայ պպի գոջքի կրօնի, դպրոցների և հանգստու-թեան պաշտպանութեան համար և առաջար-կում է զանազան միջոցներ, որոնցով կարելի է վերականգնել պատրիարքարանի նախկին արտօ-նութիւնները։

Մեղ գրում են Կ. Պօլսից. «Հայ լրտեսներ եկեղեցիների մէջ իսկ «գործում» են։ Յիշե՛ք մի նոր և իրօք հանձաբուղ միջոց բան





